Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

«Ինձ այս ծրագիրը մեծ վստահություն տվեց, ռիսկի դիմելու վստահություն», -ասում է Մեդեա Թորիան:

էջ 3

Հատուկ թողարկում 2013

«Հայաստանի և Վրաստանի կանանց ու երիտասարդների իրավազորում և քաղաքական մասնակցության բարձրացում» ծրագիրը, որի մեկնարկը կայացավ դեռևս 2012-ի հուլիսին, ներառեց չորս հանդիպում Երևանում և Թբիլիսիում՝ երկու հարևան երկրների հասարակական ակտիվիստների, ձեռներեց կանանց և երիտասարդների միջև: Ծրագիրը «Օքսֆամի» Վրաստանի և Հայաստանի մասնաճյուղերի համատեղ նախաձեռնությունն էր, որը ֆինանսավորում էր Վրաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը:

«Օքսֆամ»-ը միավորում է Հայաստանի եւ Վրաստանի իր գործընկերներին

Ծրագրի նպատակն էր միավորել «Օքսֆամ»-ի Հայաստանում և Վրաստանում իրականացվող ծրագրերի շահառուների՝ կանանց և երիտասարդների ջանքերը քաղաքացիական հասարակության կայացման և մարդու իրավունքների խթանման գործում:

«Օքսֆամ»-ի հայաստանյան գրասենյակի ղեկավար **Մարգարիտա Հակոբյանը** գնահատելով ծրագրի արդյունքներն ասում է. «Այս հանդիպումների ընթացքում, կարծում եմ, փորձի և գաղափարների փոխանակում տեղի ունեցավ, ծրագրի մասնակիցները տեսան, թե ինչպես են կանայք և երիտասարդներն իրենց համայնքներում կարողանում փոփոխություններ բերել, այնպիսի դրական փոփոխություններ, որոնք մեծ ազդեցություն են ունենում աղքատությունը վերացնելու և համայնքային կյանքը բարելավելու հարցերում: Փոխայցելությունների ընթացքում ստեղծվեց մի հարթակ, որտեղ նրանք հնարավորություն ունեցան հարցեր բարձրացնել, խոսել խնդիրների մասին, նոր գիտելիքներ և փորձ ձեռք բերել, հասկանալ, թե մենք՝ որպես հարևան երկրներ և որպես մարդիկ, ինչ տարբերություններ և նմանություններ ունենք, ինչպես ենք ներգրավվում կանանց և երիտասարդներին որոշումների կայացման գործընթացներում»:

Թամար Վաշակիձեն՝ «Օքսֆամ»-ի Վրաստանի գրասենյակի ներկայացուցիչն, իր հերթին կարևորելով հարևան երկրների միջև շփումները նշեց. «Մենք պետք է վեր կանգնենք այն կարծրատիպից, որ կինը միայն ընտանիքի մայր է ու երեխա դաստիարակող: Այդ նպատակով ծրագրի շրջանակում անցկացվել են մի շարք հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ, որոնց ուշադրության կենտրոնում կանանց և երիտասարդների ակտիվացման և որոշումների կայացման մակարդակում նրանց ներգրավման խնդիրներն էին»:

«Օքսֆամ»-ի հայաստանյան գրասենյակի «Հաշվետու կառավարում» ծրագրի ղեկավար **Լիլիթ Չիթչյանի** փոխանցմամբ՝ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ փորձում էին այնպիսի գիտելիքներ հաղորդել մասնակիցներին, որոնք նրանք հետագայում կկիրառեն իրենց համայնքներում:

«Ծրագիրը խիստ կարևոր էր մի քանի առումներով: Նախ՝ «Օքսֆամ»-ի աջակցությամբ Հայաստանի Տավուշի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում գործող 9 քաղաքացիական կենտրոնների ներկայացուցիչներն ու կամավորները այս ծրագրի շրջանակներում կապեր հաստատեցին իրենց վրացի գործընկերների՝ Վրաստանի Զուգդիդի շրջանի երիտասարդական ակումբի և կանանց զարգացման կոմիտեների անդամների հետ: Երկրորդ՝ երիտասարդ ակտիվիստները, տղաներն ու աղջիկները, փոխանակեցին իրենց նշանակալի փորձը շահերի պաշտպանության, արդյունավետ քարոզչության, համայնքի համախմբման մեթոդների և տեղական ու ազգային իշխանությունների հետ աշխատանքի մարտավարության շուրջ: Ծրագրի կարևորագույն ձեռքբերումներից մեկն էլ քաղաքականության և տնտեսության մեջ կայացած կանանց փոխադարձ շփումն էր, որի ընթացքում նրանք քննարկեցին տնտեսական հաջողություններից դեպի քաղաքականություն տանող ուղիները: Քաղաքական ասպարեզ մտնելու փորձ անող կանայք հանդիպեցին այն կանանց հետ, ովքեր տնտեսապես կայուն եկամուտների և համայնքում որպես ձեռներեց կին ճանաչվելու արդյունքում արդեն կարողացել են ընտրվել տեղական ինքնակառավարման մարմիններում»,- պատմեց Լիլիթ Չիթչյանը:

Նշենք, որ Հայաստանի և Վրաստանի ակտիվիստների հանդիպումներն արդեն տվել են իրենց արդյունքները: Մշակվել ու ստեղծվել է համատեղ կայք, որը լրացուցիչ հարթակ կհանդիսանա համագործակցությունը շարունակելու կանանց ու երիտասարդների ֆորումների և բլոգների ձևաչափում: «Օքսֆամ»-ի երկու մասնաճյուղերի գործընկեր կազմակերպությունները՝ «ԴԵԱ» ասոցիացիան Վրաստանից և «Հույսի կամուրջ» ՀԿ-ն Հայաստանից, որոնք զբաղվում են հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրներով, որոշել են համատեղ նախաձեռնություններով հանդես գալ:

«Մենք ակնկալում ենք շարունակել այս ծրագիրը առավել ընդգրկուն գործողություններով և ներկայումս աշխատում ենք այդ ուղղությամբ»,- ասում է Լիլիթ Չիթչյանը:

Ինչ տվեց ինձ այս ծրագիրը

«Նոր ծանոթություններ, նոր մոտեցումներ հին խնդիրներին»

Այսպես է բնութագրում «Հույսի կամուրջ» ՀԿ Դիլիջանի մասնաճյուղից **Կարեն Փիլոսյանը** վրացի գործընկերներից ստացված իր տպավորությունները:

- Հետաքրքիր է լսել Վրաստանի մեր գործընկերների կարծիքը, նրանց վերաբերմունքն այն խնդիրներին, որոնք մեզ էլ են մտահոգում: Որպես բլոգեր՝ ինձ հատկապես հետաքրքրում են այն թեմաները, որոնք վերաբերում էին մեդիա ոլորտին, ինչպես մեդիայի միջոցով ներազդել գլոբալ խնդիրների վրա: Իմ բլոգում անդրադառնում եմ երիտասարդների ժամանցի խնդիրներին, ունեմ նաև հատուկ էջ գենդերային խնդիրներին վերաբերող, անդրադարձել եմ կանանց զբաղվածությանը, նրանց ներգրավվածությանը հասարակական-քաղաքական կյանքում,- ասում է Կարենը՝ նշելով, որ այս հանդիպման ժամանակ էլ կարողացավ առավել տեղեկություններ ստանալ այդ խնդիրների մասին և համեմատություն անցկացնել երկու երկրների միջև: «Բլոգի համար լավ թեմա կլինի»,- հավելում է նա:

«Այս ծրագիրն ինձ ինքնավստահություն հաղորդեց»

- Եթե կինը ցանկանա, ամեն ինչի կհասնի, նաև ինքնիրացվելու հնարավորություն կստեղծի,- ասում է «ԴԵԱ» կազմակերպության անդամ **Էլմիրա Միրցխուլավան**, ով սեփական փորձով գիտի՝ ի՛նչ բարդ խնդիրների առջև կանգնեցին փախստականները Աբխազիայից, և ինչպես կանայք այս դժվարին ժամանակներում կարողացան իրենց ընտանիքների ողջ պատասխանատվությունն իրենց վրա վերցնել:

- Այսօր ես մտածում եմ քաղաքական ասպարեզ մտնելու մասին, քանի որ կան շատ խնդիրներ, որոնք պետք է լուծումներ գտնեն:

Շարունակությունը՝ էջ 2

Զուգահեռներ

Կանանց թիվը խորհրդարանում

2012-ի հոկտեմբերին կայացած ընտրությունների արդյունքում Վրաստանի խորհրդարանում այսօր ներկայացված է ընդամենը 10,8 տոկոս կին՝ 150 պատգամավորից:

2012-ի մայիսին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում Հայաստանի Ազգային ժողովում այսօր ներկայացված է ընդամենը 10,7 տոկոս կին՝ 131 պատգամավորից:

Հայաստանում խորհրդարանական ընտրություններից առաջ 20 տոկոսանոց քվոտա էին ամրագրել ՀՀ Ընտրական օրենսգրքում, իսկ Վրաստանում որոշել էին խրախուսել այն կուսակցություններին, որոնց համամասնական ցուցակներում առնվազն 20 տոկոս կանանց ներկայացվածություն լինի՝ 10 տոկոսով ավելի պետական ֆինանսավորմամբ: Արդյունքում՝ երկու երկրներում էլ սպասելիքներն արդարացան կիսով չափ:

Կանայք տեղական իշխանություններում

Կանանց ներկայացվածությունը Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների (ավագանիների) կազմում 8,4 տոկոս է, իսկ համայնքների ղեկավարների թվում՝ միայն 2,2 տոկոս: Վրաստանի տեղական իշխանությունների՝ սակրեբուլոների կազմում կանայք 10% են կազմում, իսկ սակրեբուլոների ղեկավարների թվում՝ 5%:

Կանանց և տղամարդկանց աշխատավարձերի հարաբերակցություն

Ըստ վիճակագրական տվյալների՝ Հայաստանում կանանց աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 64,1%-ը, Վրաստանում՝ 57,7%-ը:

Հայաստան.պայքար «Ընտանեկան բռնության մասին» օրենքի համար

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որի կազմում միավորվել են խնդրով զբաղվող 7 ՀԿ-ներ, պայքարում է այս տարվա սկզբին Հայաստանի կառավարության կողմից մերժված «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի ընդունման համար՝ կոչ անելով միանալ ստորագրահավաքին:

Վրաստանում ընտանեկան բռնության մասին օրենքն ընդունվել է 2006-ին, լրացվել 2009-ին:

Երիտասարդների ձայնը

«Հայ կանայք ավելի նպատակասլաց ու համառ են»

«ԴԵԱ» ասոցիացիայի երիտասարդական ինտեգրման ակումբի ղեկավար Գեորգի Կաջայան կարծում է, որ ծրագրի շրջանակներում անցկացվող թրենինգներն ու սեմինարները դրական արդյունքներ են տալիս:

«Մենք տեսնում ենք, թե ինչպես են պասիվ տրամադրված կանայք կամ երիտասարդության ներկայացուցիչները դառնում հասարակության ակտիվ անդամներ: Մեր խնդիրն է՝ անել ամեն ինչ, որպեսզի որքան հնարավոր է շատ կանայք կարողանան հայտնվել իշխանության վերին օղակներում՝ թե՛ ՏԻՄ-երում և թե՛ խորհրդարանում ու կառավարությունում»,- ասում է Կաջայան՝ նշելով, որ Հայաստանում և Վրաստանում կանանց հիմնախնդիրների որոշ նմանությամբ հանդերձ հայ կանայք ավելի նպատակասլաց և համառ են, ուստի «մենք ընտրել ենք Հայաստանը որպես գործընկեր այս ծրագրի համար՝ նրանց դրական փորձը ներառելու նպատակով»:

«Ո՞նց կարելի է չընդունել այն, որ գյուղապետը կին է...»

- Ամենակարևորը, որ տալիս է «Օքսֆամ»-ի ծրագիրը, այն է, որ զարգանում ես, մտածում, որ ինքդ էլ կարող ես օգտակար լինել և քո համայնքում որևէ բան անել...- ասում է «Գոմք» կոոպերատիվի անդամ Շաղիկ Խաչատրյանը, ով նմանվելու իր օրինակն ունի՝ մայրը գյուղի ավագանու անդամներից է:

- Ես սկզբում շատ էի տատանվում, երբ մայրս ասաց, որ մասնակցելու է ավագանու ընտրություններին: Ասում էի՝ մա՛մ, մի՛ դիր, բա որ չանցնե՞ս, հայրիկն էլ՝ թե վստա՞հ ես, որ մարդիկ քո որոշումներից գոհ կլինեն... Բայց ուրախ եմ, որ մայրս ավելի վճռական գտնվեց ու չլսեց մեզ, հատկապես որ համայնքում ամենաշատ ձայներն ինքն էր ստացել: Այսինքն՝ մարդիկ վստահել էին իրեն: Իհարկե անսովոր էր, հատկապես սկզբում, երբ նա ժողովներից ուշ էր վերադառնում, բայց նաև հպարտանում եմ, որ մեր տուն կարող են հարևաններ, համագյուղացիներ գալ, իրենց խնդիրները ներկայացնել՝ վստահ լինելով, որ այդ ամենը հետագայում կքննարկվի նիստերի ժամանակ: Ի միջի այլոց, մեր նախկին գյուղապետը կին էր, ու հաճախ լսում էի՝ գյուղապետը կի՞ն... Երբեք չեմ հասկանա այդ մարդկանց, ո՞նց կարելի է հպարտանալ, օրինակ, կին դպրոցի տնօրենով և միաժամանակ չընդունել այն, որ կինը կարող է գյուղապետն լինել:

«Տեղեկատվությունն օգնում է կարծրատիպերը կոտրելուն»

- Իսկ այս ծրագիրը շատ հագեցած էր թե՛ նոր տեղեկատվությամբ, թե՛ շփումներով,- ասում է «ԴԵԱ» կազմակերպության անդամ Սոֆիո Չաչիան, ով նաև Փոթի քաղաքի թիվ 11 դպրոցի տնօրենն է:

- Այս ծրագրից վերցրեցի մի միտք, որն անպայման կփորձեմ իրականացնել մեզ մոտ՝ Փոթիում. ուզում եմ ակտիվ երիտասարդների մի խումբ ստեղծել նաև մեր քաղաքում: Այսօր ունենք մեր խորհրդարանում մի կին, ով ուզում է իր թեկնածությունն առաջադրել նաև փոխքաղաքապետի պաշտոնում: Սա, կարծում եմ, լավ առիթ է համախմբվելու և աջակցելու նրան...

Կարծիք

«Այսօր դեռ գերիշխում է այն կարծրատիպը, թե կինը պետք է լինի միայն տանը՝ խոհանոցում ու երեխաներով զբաղվի: Սակայն, կարծում եմ՝ պահը հասունացել է, և կանայք դուրս են գալիս այդ կաղապարներից ու ակտիվ հասարակական-քաղաքական կյանքով են ապրում», -

ասում է ծրագրի մասնակից Մեդեա Թորիա

Առաքելություն

«Խնդրի լուծումն սկսեցինք ամենաներքեւի օղակներից...»

Մադոննա Խարեբավան Վրաստանում հայտնի անձնավորություն է: Արդեն երկար տարիներ զբաղվում է կանանց և երեխաների իրավունքներով, ժամանակին ընտրվել էր Զուգդիդի տեղական ինքնակառավարման մարմնում, ընդ որում, այն տարիներին, երբ այս համակարգը դեռ նոր-նոր էր ձևավորվում: Նրա ղեկավարած «ԴԵԱ» ասոցիացիան զբաղվում է կանանց, այդ թվում սահմանափակ հնարավորություններով անձանց և փախստականների իրավունքների պաշտպանությամբ, ինչպես նաև բարեգործությամբ: Ասում է՝ ոչ կառավարական կազմակերպություն հիմնելու գաղափարն իրեն հուշել է «Օքսֆամ» բրիտանական կազմակերպության ներկայացուցիչը, որի հետ համագործակցությունը շարունակվում է մինչ օրս: Մադոննա Խարեբավան սահմանափակ հնարավորություններով մարդկանց իրավունքների ակտիվ ջատագով է և անում է հնարավոր ամեն ինչ Վրաստանում ներառական կրթության համակարգը ներդնելու համար: Մեր զրույցը նրա հետ կանանց իրավունքների պաշտպանության առանձնահատկությունների, Կովկասի պետություններին բնորոշ կարծրատիպերի և շատ այլ բաների մասին է...

- Եթե խոսելու լինենք առանձնահատկությունների մասին, ապա նախևառաջ կցանկանայի նշել, որ կանանց իրավունքների իրացման և պաշտպանության վիճակը շրջանների և մայրաքաղաքի միջև տարբեր է, թեև օրենսդրությունը ողջ երկրում նույն է: Այս տարբերությունը պայմանավորված է տարբեր գործոններով և առաջին հերթին նրանով, որ մայրաքաղաքում անհամեմատ դյուրին է տեղեկություններ ստանալ, քան շրջաններում, և դա հասկանալի է, բայց դրանից տուժում են կանայք: Սակայն խնդիրը միայն իր իրավունքների պաշտպանության մասին տեղեկություններ ստանալը չէ, չէ՞ որ ամենագլխավորը իր իրավունքները պաշտպանելն է: Եվ այստեղ, պետք է ասել, բացակայում է հաջողության հասնելու ճանապարհին ամենագլխավոր գործոնը՝ չկան իր իրավունքների գիտակցումը և վստահություն, որ իրենք կարող են իրենց պաշտպանել, քանի որ փոքր քաղաքներում բոլորը ճանաչում են մեկը մյուսին. նրանք կա՛մ բարեկամ են, կա՛մ հարևան, և երբ կինը պաշտպանում է իր իրավունքները, ապա ստացվում է, որ պետք է առճակատման գնա նրանցից մեկի հետ: Իսկ սա, համաձայնեք, խիստ խանգարում է: Դրան հավելած կնոջ տեղն ու դերը սահմանափակող կարծրատիպերը, Կովկասը հենց նրանով է Կովկաս, որ այդ կարծրատիպերն առայժմ անհնար է արմատախիլ անել:

- Իսկ ինչպիսի՞ն է Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածությունը: Կանայք մուտք ունե՞ն այդ զուտ «տղամարդկանց» աշխարհ:

- Ցավոք, Զուգդիդի տեղական ինքնակառավարման մարմիններում (սակրեբուլո) 41 ներկայացուցչից միայն մեկն է կին, և սա ամենավատ ցուցանիշն է Վրաստանում և մեր շրջանում: Եթե խոսելու լինենք ընդհանուր առմամբ, խնդիրն անկասկած այն է, որ փաստորեն ամենուրեք, ամենատարբեր հաստատություններում՝ թե՛ պետական և թե՛ մասնավոր, աշխատում են բազմաթիվ կանայք, սակայն նրանք բոլորն որոշումների ընդունման մակարդակի դուրս են: Փաստորեն, ցանկացած մակարդակում և ոլորտում բոլոր որոշումներն ընդունում են միայն տղամարդիկ:

- Հավանաբար, ինչպես մեզանում՝ ձեռնարկվում են կանանց առաջքաշման ինչ-որ ծրագրեր, իսկ Վրաստանի խորհրդարանում կա նույնիսկ գենդերային հարցերի հանձնաժողով... Ինչո՞ւ արդյունքներ չկան:

- Պատճառն այն չէ, որ ծրագրերը կամ կառուցները չեն գործում: Այն իրավիճակը, երբ ՈԿԿ բոլոր ջանքերից և բարեփոխումներից հետո Վրաստանի խորհրդարանում այսօր ընդամենը 16 կին է, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածությունը խիստ ցածր է, ես բացատրում եմ նրանով, որ մեր հասարակությունն այս առումով դեռ շատ ցածր մակարդակի վրա է: Եվ ով էլ փորձի հակառակն ապացուցել, դա այդպես է: Ընդ որում, խնդիրը ոչ միայն կարծրատիպերով սնվող մտածելակերպն է, այլև իրազեկվածությունը: Ուստի և մենք խնդրի լուծումն սկսեցինք ամենաներքևի օղակներից, որպեսզի հասարակությունը կարողանար ազդել իշխանության վրա, ոչ թե հակառակը: Եվ հարցը, թե ինչո՛ւ գործող գենդերային հարցերի հանձնաժողովի առկայությամբ Վրաստանում ոչինչ չի փոխվում, մեկ անգամ ևս հաստատում է մեր մոտեցման արդարացիությունը, հարկ է գործընթացն սկսել հասարակության մտածողության փոփոխությունից, և միայն այդ դեպքում, արդեն ինքնըստինքյան, այս հանձնաժողովն ու մյուսները կսկսեն գործել:

- Իսկ Դուք անձամբ տեսնո՞ւմ եք Ձեզ սակրեբուլոյում կամ որոշումների ընդունման մեկ այլ մակարդակում:

- Ես արդեն անցել եմ դրա միջով, ընդ որում առաջին տարիներին, երբ սակրեբուլոները դեռ նոր էին ձևավորվում երկրում: Ասեմ, որ շատ դժվար էր, քանի որ հասարակության, առավել ևս՝ Կովկասի համար պարզապես անընդունելի և անթույլատրելի էր, որ որոշումները կինն ընդունի: Սակայն ես առաջին հնգյակում էի, այսինքն՝ հանրությունը մի կողմից կարծես թե պատրաստ էր կնոջ տեսնել համայնքի ղեկավարի դերում, իսկ մյուս կողմից՝ քվեարկության արդյունքներով ես ընդգրկվեցի առաջին հնգյակում: Իսկ աշխատանքի ընթացքում այս իմաստով խոչընդոտներ չեն եղել:

Այսօր ես ներկայացված եմ վարչապետին կից համակարգող խորհրդի կազմում, որի մեջ մտնում են ոչ կառավարական կազմակերպություններ... Կինը պետք է ամեն տեղ լինի՝ ահա թե ի՞նչ կարող եմ ասել իմ անձնական փորձից, և տա Աստված, որ դա ի վերջո հասկանալի և ընդունելի լինի նաև մեր տղամարդկանց համար:

Դիրքորոշում

«Ամենահաջողակն այն կինն է, ով պահում է ներդաշնակությունը ընտանիքի եւ կարիերայի միջեւ»

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի նախագահ Լիլիթ Ասատրյանը, ով չնայած իր երիտասարդ տարիքին՝ մշակույթի փոխնախարարի պաշտոնում աշխատելու փորձ ունի, այժմ իր ողջ եռանդն ու ժամանակը ներդնում է հասարակական սեկտորում:

Նրա ղեկավարած Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) ուշադրության կենտրոնում է պահում նաև գյուղաբնակ կանանց խնդիրները՝ հատկապես հաջողված համարելով իր այն ծրագրերը, որոնք միտված են գյուղի կանանց հզորացնելուն, կնոջն իր համայնքին, բնակավայրին կապելուն և զուգահեռաբար լուծելու այն բազմաթիվ խնդիրները, որոնք նրանք ունեն:

«Իհարկե, չեմ կարող ասել, որ մենք լիովին բավարարված ենք այն աշխատանքով, որ կատարել ենք, բայց արդեն քայլ առ քայլ առաջ ենք գնում և այս ոլորտում ամրագրել ենք որոշակի ձեռքբերումներ»,- ասում է Լիլիթ Ասատրյանը՝ առաջին հերթին նշելով իրենց նախաձեռնությամբ ստեղծված «Կին ձեռներեցների ցանցը», որի մեջ ներգրավված են նաև մեծ թվով գյուղատնտեսությամբ զբաղվող կանայք:

Անցյալ տարվանից ՀԵԿԱ-ն «Օքսֆամ» կազմակերպության հետ համատեղ իրականացնում է «Գյուղմթերքների արտադրության ոլորտի կին հերոս» ամենամյա մրցույթը, որը գյուղատնտեսության ոլորտում լայն գործունեություն ծավալող, համայնքի կյանքում բացառիկ և օրինակելի ներդրում ունեցող կանանց բացահայտմանն ու խրախուսմանն է ուղղված:

«Դեռ անցյալ տարի ծրագրի շնորհիվ ծանոթացանք կանանց հետ, ովքեր ՀՀ տարբեր մարզերում շատ արժեքավոր գործունեություն են ծավալում գյուղատնտեսության ոլորտում: Իսկ նրանց հաջողության գրավականը, ըստ իս, հավատն է իրենց գործի հանդեպ, նվիրումը և պարգևատրումից հետո, իհարկե, հպարտության զգացումը, այժմ պետք է ավելին անել, չէ՞ որ իրենց հետևում են այլ կանայք և իրենց փորձով ոգևորված են: Ի դեպ, երբ այս տարի այցելեցինք նախորդ տարվա հաղթողներին՝ գնահատելու՝ ի՞նչ դրական տեղաշարժեր կան, նկատեցինք, որ այս կանայք իրենց համայնքում այլ դեր են ստանձնել, ու բոլորը նրանց՝ որպես հերոսի են վերաբերվում»,- պատմում է Ասատրյանը՝ ավելացնելով, որ այդ կանանց օրինակը ևս մեկ անգամ ապացուցում է, որ խոչընդոտներ ամեն բնագավառում էլ լինում են, բայց պետք չէ դրանցից ընկճվել... Ավելին, խոչընդոտները պետք է ավելի մեծ ուժ տան առաջ գնալու, հակառակ դեպքում որևէ մեկը որևէ ոլորտում արդյունք ունենալ չէր կարող...

Անդրադառնալով կարիերայի և ընտանիքի միջև կոնֆլիկտի խնդրին՝ Ասատրյանը նկատում է, որ մարդիկ, հատկապես, գյուղական համայնքներում, կնոջ աշխատանքը դիտարկում են միայն ընտանիքում իր դերը կորցնելու միջոցով:

«Սա մեծ խնդիր է, պարզապես պետք է ցույց տալ, որ մեկը մյուսի հաշվին չի լինում, այլ երկուսն էլ պետք է ներդաշնակ լինեն: Այն բոլոր կանայք, ովքեր կին հերոսներ են կամ կին ձեռներեցների ցանցի շրջանակում են գործում, կարողանում են համատեղել, և, ի վերջո, ամենահաջողակն այն կինն է, ով պահում է այդ ներդաշնակությունը»,- ասում է Ասատրյանը՝ նկատելով, որ եթե կինն ամբողջությամբ ընտանիքում է, եթե կանայք իրենց հնարավորությունները չեն իրականացնում նույն հանրային ոլորտում, երկրի կառավարման ոլորտում, այս դեպքում համայնքը, մեր պետությունը լուրջ ռեսուրս են կորցնում: Արդյունքում՝ նրա խոսքով, ունենք կառավարման ոչ այնքան արդյունավետ համակարգ, մի շարք այլ խնդիրներ, և, ո՞վ գիտի, գուցե և պատճառներից մեկն էլ այն է, որ կանայք չկան այս ոլորտներում:

«...Քանի դեռ կանանց հիմնախնդիրները դիտարկվում են բացառապես կանանց վերաբերող հարցեր, տղամարդիկ, լսելով այս խնդիրների մասին, ասում են՝ կանացի հարցեր են, քանի դեռ չունենք հասարակության համընդհանուր մոտեցումը այս հարցին, մենք չենք կարող ակնկալել, որ այդ հարցերը ամբողջությամբ լուծելի են: Սա նույնն է, եթե ասենք՝ երեխաների հիմնահարցերով թող երեխաները զբաղվեն...»

Հաջողության բանալին

«Ուժեղ կանանց դրական են ընկալում միայն ուժեղ տղամարդիկ»

Հայաստանի Տավուշի մարզում գրեթե բոլորն են ճանաչում Գանձաքար գյուղից երիտասարդ և օրինակելի ֆերմեր Էմմա Հակոբյանին: Նա ամենուր է, այնտեղ, որտեղ կարելի է նոր գիտելիքներ ձեռք բերել, փորձ փոխանակել, նոր տեխնոլոգիաների մասին տեղեկատվություն ստանալ, մարդկանց օգտակար լինել: 2012-ին նա հաղթող ճանաչվեց «Գյուղմթերքների արտադրության ոլորտի կին հերոս» մրցույթում, որն ամեն տարի կազմակերպվում է «Օքսֆամ»-ի և Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից:

Էմման 2003-ից Գանձաքարում գործող օրգանական գյուղատնտեսության ֆերմերային դաշտային դպրոցի (ՖԴԴ) նախաձեռնող անդամներից է: Օրգանական եղանակով աճեցնելով բազմատեսակ մշակաբույսեր՝ նա իր փորձով ու հմտությամբ նպաստում է առանց թունաքիմիկատների սննդամթերքի արտադրության խթանմանը իրենց համայնքում: Նախկինում ներգրավված է եղել կաթնամթերքի արտադրության մեջ: Կին ֆերմերն զբաղվում է նաև մեղվաբուծությամբ: Ակտիվ մասնակցություն ունի հասարակական կյանքում, համայնքային մի շարք նախաձեռնությունների հեղինակ ու մասնակից է, ունի բազմաթիվ մտահղացումներ և նախագծեր, որոնց հիմքում համայնքի զարգացման մեջ իր լուման ներդնելու մեծ ցանկությունն է:

Նրա խոսքով՝ համագյուղացիները սկզբում չէին հավատում, որ ինքը կարող է բիզնեսով զբաղվել: Նրանք թերահավատությամբ էին նայում նրա ձեռնարկմանը և տարբեր սեմինարներին ու թրենինգներին նրա մասնակցությանը: Էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրության մասնագետի որակավորում Էմման ստացել է Ռումինիայում: Գյուղում շատերը խեթ էին նայում նրա ուղևորությանը. «Շատերն ինձ հանդիմանում էին, որ ես մենակ եմ մեկնել ինչ-որ անհասկանալի սեմինար, և ո՞նց կարող է ամուսինը կնոջը մենակ թողնել ուրիշ երկիր գնալ»,- պատմում է Էմման:

Նրա կարծիքով՝ հենց ամուսնու աջակցությունն ու ըմբռնումն օգնեցին իրեն անկախ և հաջողակ կին դառնալուն: Ասում է, որ կարծրատիպերն ու ավանդական բարքերը, որոնք հատկապես խորն են գյուղում, բացասաբար են ազդում կանանց վրա՝ սահմանափակելով ինքնադրսևորման նրանց հնարավորությունները: «Ուժեղ կանանց դրական են ընկալում միայն ուժեղ տղամարդիկ, ում հաճախ չես հանդիպի»,- ասում է նա:

«Ապրե՛ս, Տեա՛»

Ամեն ինչում առաջինը լինել, բայց մի պայմանով՝ արված գործը պետք է լինի ամենալավը: Այսպես է ապրում Տեա Գաբելայան: Արդեն 5 տարի է, նա Վրաստանի Զուգդիդի քաղաքի 9-րդ դպրոցի տնօրենն է:

- Երբ դպրոց եկա, այնտեղ ոչ մի բան չկար, դպրոցի վիճակն էլ աղետալի էր,- հիշում է նա՝ նշելով, որ ծանոթանալով իր նոր աշխատատեղին՝ մեծ հուսահատության մեջ է ընկնում: Հնարավո՞ր է արդյոք, որ նման պայմաններում երեխաները սովորեն, ամեն ինչ պետք է փոխվի, դպրոցն անգամ դարպաս չուներ, դասասենյակները, մարզադահլիճը քարուքանդ վիճակում էին, գրադարան ընդհանրապես չկար, իսկ այս ամենը վերանորոգելու համար միայն պետության կողմից տրամադրվող գումարները բավարար չէին:

Իր հնարամտության, բարեկամների, ծանոթների, ընկերների, հովանավորների օգնությամբ գումարներ հայթայթելով՝ նրան ի վերջո հաջողվեց անել անհնարինը՝ կերպարանափոխել դպրոցը:

Տեան իր հոգին է դրել սիրած աշխատանքի մեջ և ամեն ինչ անում է, որ իր դպրոցն առաջինը լինի՝ այս մասին են խոսում դպրոց տանող վերանորոգված կամուրջը և ճանապարհը, դպրոցի մարզադահլիճը, գրադարանը, կոկիկ դասասենյակները, չզարմանաք, բայց դպրոցում նույնիսկ սրճարան կա:

- Շատերն են ինձ ասում՝ ապրե՛ս, Տեա՛, և դա ինձ համար խթան է ավելի շատ բան անել մարդկանց համար, որպեսզի նրանց վաղվա օրը լուսավոր լինի:

Անձնական կյանքում էլ փոփոխությունների է սպասում, ասում է, որ սիրահարված է, ուզում է ամուսնանալ և ընտանիք կազմել, լավ կին լինել իր ամուսնու համար և 6 երեխա ունենալ:

Սակայն դա չի խանգարում Տեայի մեկ այլ մեծ ցանկությանը՝ իր աշխատանքային կոլեկտիվում «հեղափոխություն» անել.

- Մեր կոլեկտիվում հիմնականում կանայք են, դպրոցում կա ընդամենը 3 տղամարդ, ովքեր տեխնիկական աշխատողներ են, բայց ես կարծում եմ, որ սերնդի դաստիարակության գործում շատ կարևոր է, որ նրանց դաստիարակեն և՛ տղամարդիկ, և՛ կանայք, դրա համար էլ որոշել եմ աշխատանքի հրավիրել նաև տղամարդկանց, մի այնպիսի բան մտածել, որ հետաքրքրի նրանց, և նրանք դպրոց գալու խթան ունենան: Ուզում եմ դպրոցում աշխատող տղամարդկանց թիվը հասցնել գոնե 30 տոկոսի:

Տեայի կարծիքով՝ ճիշտ այնպես, ինչպես պետք է դպրոցում ավելացնել տղամարդ ուսուցիչների թիվը, այնպես էլ քաղաքականության մեջ՝ կանանց թիվը, քանի որ կանայք շատ բան կարող են անել, և ինքն էլ որոշել է մասնակցել գալիք ընտրություններին:

Տեան վստահ է, որ հաջողություն կունենա, քանի որ արդեն հասցրել է քաղաքում ճանաչվել և սիրվել շատերի կողմից, սակայն ընտանիքում նրա այս ցանկությունը միանշանակ չեն ընդունել:

- Այս հարցում ինձ հույս և ուժ է տալիս մայրս, իսկ հայրս ավանդույթների մարդ է և չի ուզում, որ քաղաքականություն մտնեմ, ասում է՝ «չեմ ուզում, որ աշխատես, ուզում եմ, որ դու միայն ամուսնանաս և երեխաներ ունենաս»: Բայց ես այդպես չեմ մտածում, չեմ ուզում միայն տանը նստել և ամուսնուս խնամել, երեխաներին պահել, ուզում եմ աշխատել, մանավանդ որ կարող եմ այդ ամենը համատեղել…

«Կանայք կազնվացնեն քաղաքականությունը»

«Ինչքան շատ կանայք լինեն քաղաքականության մեջ, այնքան կազնվացնեն քաղաքականությունը»,- առաջնորդվելով այս կարգախոսով՝ Մադոննա Զաբոան փորձում է այն կյանքի կոչել իր ակտիվ գործունեությամբ: Ավելին, նա համոզված է, որ կինը կարող է աշխարհը փոխել:

- Կինը միշտ գնում է դեպի խաղաղություն, նա կարողանում է պայմանավորվել, եթե կանայք շատ լինեին քաղաքականության մեջ, կարծում եմ՝ պատերազմներ քիչ կլինեին,- վստահ է Մադոննան:

Նա Վրաստանի Զուգդիդի քաղաքի կառավարման մունիցիպալիտետում ղեկավարում է մշակույթի, սպորտի, երիտասարդության և հուշարձանների պահպանության ծառայությունը: Միևնույն ժամանակ անդամակցում է «ԴԵԱ» ոչ կառավարական կազմակերպությանը, որն աջակցում է երիտասարդներին և կանանց, իսկ վերջերս ինքն է հիմնել հասարակական կազմակերպություն:

- Այն կոչվում է «Ակադեմուս զարգացման և ուսուցման կենտրոն», մեր թիրախ խմբերն են կանայք և երիտասարդները: Կազմակերպությունն աշխատելու է քաղաքացիական իրավունքի և առհասարակ մարդու իրավունքների ոլորտում գիտելիքներ և օգնություն տրամադրելու ուղղությամբ, փորձելու ենք կանանց համար այնպիսի հնարավորություններ ստեղծել, որպեսզի տղամարդկանց հետ հավասար կարողանան մտնել և՛ քաղաքականություն, և՛ բիզնես:

Մադոննան համարում է, որ կանանց առաջխաղացմանը խանգարող երեք հանգամանք կա: Նախ՝ կարծրատիպը, որ տղամարդն ավելի լավ կարող է ղեկավարել, քան կինը: Երկրորդ՝ կանայք չունեն բավականաչափ քաղաքական կրթություն և, ամենակարևորը՝ ֆինանսական միջոցներ ընտրարշավ իրականացնելու համար:

Մադոննան համոզված է, որ այս մտածելակերպն արմատախիլ անելու համար անհրաժեշտ է կանանց մեջ զարգացնել առաջնորդի հատկանիշները, և դա պետք է անել դեռ վաղ հասակից:

- Մենք աշխատում ենք նաև դպրոցներում և մանկապարտեզներում, քանի որ կարծում ենք, որ ակտիվ դիրքորոշումը պետք է ձևավորել կնոջ մեջ մանուկ հասակից, հատկապես մեր տարածաշրջանում, որտեղ տղամարդկանց և կանանց դերերը խիստ տարանջատված են:

Ի դեպ, Մադոննան 24 տարի աշխատել է դպրոցում և անգամ հասցրել է երկու դպրոց ղեկավարել: Այնպես որ, լավ գիտի՝ ինչպես խոսել երեխաների և երիտասարդների հետ, ինչպես մատչելի մեկնաբանել ամենաբարդ հարցերը և ամենակարևորը՝ ինչպես քաջալերել նրանց, որ յուրաքանչյուրը, կարևոր չէ՝ աղջիկ թե տղա, կարող է առաջնորդ լինել:

Ի դեպ, ակտիվ հասարակական գործիչ և խիստ ու պահանջկոտ ղեկավար լինելով հանդերձ՝ Մադոննան բազմաթիվ ուրիշ հետաքրքրություններ և հոբբիներ ունի՝ բրդից հատուկ եղանակով շարֆեր է պատրաստում, զբաղվում է ուլունքագործությամբ, շատ է սիրում կարդալ և մեծ կիրք է տածում լուսանկարչության հանդեպ…

Մադոննան չի կարողանում հասկանալ այն մարդկանց, ովքեր առավոտից երեկո նստում են տանը, ծուլանում, ոչնչով չեն զբաղվում և դժգոհում են պետությունից, հասարակությունից և շարունակ տրտնջում, թե անելիք չկա, բայց իրենք կուզեին ինչ-որ բանով զբաղվել:

- Ես անում եմ այն բոլոր գործերը, որոնք կոչվում են կանացի և ոչ կանացի,- ժպտում է նա,- նույն հաջողությամբ կարող եմ տունը հավաքել, ճաշ պատրաստել, ձեռագործ անել և տեխնիկա նորոգել, վարդակը սարքել, պարզապես պետք է մի քիչ ցանկություն ունենալ:

Հպարտությամբ պատմում է, որ վերջերս շատ է տարվել ինտերնետով և առանց որևէ մեկի օգնության այնքան է հմտացել, որ հասել է հաքերի մակարդակի…

Գալիք ընտրություններին մասնակցելու մասին Մադոննան դեռևս չի մտածել, սակայն համոզված է մի բանում, որ անպայման օգնելու է ընտրվել ցանկացող կանանց…

Նոր գաղափարներ

«Ինձ այս ծրագիրը տվեց, ռիսկի դիմելու վստահություն»

- Ուզում եմ տեղական ինքնակառավարման մարմիններում իմ թեկնածությունն առաջադրել,- ասում է Մեդեա Թորիան՝ «ԴԵԱ» կազմակերպության անդամ, երիտասարդական պալատին կից պատանեկան կազմակերպության համակարգող:

- Սա իմ կյանքի ամենամեծ ռիսկը կարող եմ համարել: Ունեմ կոնկրետ հարցերի շրջանակ, որոնց համար պայքարելու եմ՝ կանանց, բազմազավակ ընտանիքների, փախստականների, միայնակ մայրերի խնդիրներ: Սրանք մեծ մասամբ այն խնդիրներն են, որոնց ես իմ կյանքում անձամբ եմ առնչվել և զգացել եմ բոլոր դժվարությունները: Ամուսնալուծված եմ ու մենակ եմ մեծացրել իմ երեխային: Եղել են տարակարծություններ թե՛ իմ ընտանիքում, թե՛ հասարակության վերաբերմունքի մեջ: Սակայն միայն իմ ակտիվությունը հասարակական կյանքում և իմ աշխատանքն են օգնել ինձ հաղթահարելու բոլոր դժվարությունները և դրանք անցյալում թողնելու:

«Ես չեմ նստում տանը և դժգոհում…»

- Արդեն 14 տարի անդամակցում եմ ԴԵԱ կազմակերպությանը, այնտեղ թրենինգներ եմ վարում՝ բիզնեսի, գենդերային և այլ թեմաներով, ինչպես նաև ինքս եմ մասնակցում տարբեր սեմինարների,- ասում է Նունու Քարդավան:

Այս տարիների ընթացքում Նունուն կուտակել է բավական կենսափորձ և շատ լավ գիտի՝ ինչպե՛ս կարելի է հրատապ հարցերի համար անհրաժեշտ լուծումներ գտնել, ուստի և որոշել է առաջադրել իր թեկնածությունը գալիք տեղական ընտրություններում՝ որպես սակրեբուլոյի անդամ:

- Ես երկար տարիներ դիտարկում եմ կանանց դժվար կենցաղը, տարիների ընթացքում այն կուտակվել է որպես անձնական ցավ, և հուսով եմ, որ կառավարման մարմնում լինելով՝ կարող եմ այն փոխել դեպի լավը,- ասում է Նունուն:

«Մենք էլ ենք կարող աջակցել մեր երկրի հզորացմանը»

«Տուր ինձ քո ձեռքը, ես կամավոր եմ» բնապահպանական ծրագրի ակտիվ մասնակից Մարիամ Եսայանն ապրում է Տավուշի մարզի Չինչին գյուղում, 20 տարեկան է և, ի տարբերություն իր մյուս հասակակիցների, ովքեր ավարտելով դպրոցն աշխատում են գյուղից հեռանալ, ոչ միայն չի ուզում հեռանալ, այլև շատ մտահոգ է գյուղի ապագայով:

Պատմում է, որ այսօր գյուղի դպրոցն ընդամենը 57 աշակերտ ունի, որ երիտասարդությունը գյուղում չի կարող ոչնչով զբաղվել, չկա մի բան, որը նրանց կկապի հարազատ գյուղին՝ ո՛չ ժամանցի վայրեր, ո՛չ աշխատատեղ, ո՛չ լավ ապագայի հույս, իսկ վերջին շրջանում հաճախակի դարձած կրակոցներն այս ամենին գումարել են այն, որ սահմանամերձ այս գյուղում ապրելն այլևս անվտանգ չէ:

Մարիամը հաշմանդամություն ունի, սակայն այն երբեք նրա համար խոչընդոտ չի եղել, այլ մի փոքրիկ միջադեպ, որը տեղի է ունեցել նրա կյանքում, ասում է նա: Նրան շատ է անհանգստացնում, որ մեր գյուղերն ընդհանրապես հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող մարդկանց, ինչն էլ ստիպում է նրանց մեկուսացված կյանք վարել:

Մարիամին ուրախացնում է այն հանգամանքը, որ իրենց գյուղում գործում է «Հույսի կամուրջ» կազմակերպությունը, որը հնարավորություն է տվել ինչպես իրեն, այնպես էլ շատ երիտասարդների ակտիվանալ, ներգրավվել հասարակական կյանքի մեջ, շփվել միմյանց հետ, հասարակության լիիրավ անդամ զգալ, որ ապրում է իր երկրում և կարող է աջակցել իր երկրի հզորացմանը, զարգացմանը:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրների լուծման համար Մարիամը մի հնարավոր եղանակ է տեսնում միայն՝ որ նրանք էլ քաղաքականության մեջ պետք է լինեն: Ավելին, անձամբ ինքն էլ է ուզում մտնել քաղաքականության մեջ, ասում է՝ այնտեղ ինքն անելիքներ շատ կունենար:

Լոբբինգ

«Մենք բավական ծանրակշիռ փաստարկներ ունենք, որոնք կարող ենք ներկայացնել իշխանություններին»

Մեր զրույցը Վրաստանի կանանց ինֆորմացիոն կենտրոնի տնօրեն Ելենա Ռուսեցկայայի հետ կայացավ Թբիլիսիում՝ կանանց քաղաքական մասնակցության հետ կապված խնդիրների շուրջ: Ուստի մեր առաջին հարցն էր՝ ինչպիսի՞ն է այդ առումով իրավիճակը Վրաստանում:

- Գենդերային հավասարության, կանանց քաղաքական մասնակցության կամ նրանց տնտեսական վիճակի վերաբերյալ ոչ մի լավ բան չենք կարող ասել: Եթե Հայաստանի ընտրական օրենսգրքում քվոտայի մեխանիզմ է ներդրվել, որի արդյունքում դուք խորհրդարանում ավելի շատ կանանց ներկայացվածություն ապահովեցիք, ապա մեզ մոտ, չնայած կանանց կազմակերպությունների մեծ ջանքերին, նման առաջարկը, այդուհանդերձ, չընդունվեց: Դրա փոխարեն մեկ այլ մեխանիզմ է փորձարկվել: Մենք որոշակի փոփոխություններ կատարեցինք, ըստ որոնց, այն կուսակցությունները, որոնք ավելի մեծ թվով կանանց կներգրավեին իրենց ցուցակներում, կստանային հավելյալ ֆինանսավորում: Սակայն ինչպես ցույց տվեցին ընտրությունները, այն կուսակցությունները, որոնք անցան խորհրդարան, ֆինանսապես շատ հզոր էին, և փոքրիկ ֆինանսական արտոնությունը նրանց չհրապուրեց, ի հետևանս՝ այդ նախաձեռնությունը ոչ մի արդյունք չտվեց:

Թեպետ, նրա խոսքով, նախկին 6% ներկայացվածության փոխարեն այժմ որոշակի աճ կա, սակայն այն ավելին կլիներ, եթե.

- Խորհրդարանական ընտրությունների ժամանակ երկու կանայք, ովքեր անցել էին ցուցակներով, նշանակվեցին արտաքին գործերի և արդարադատության նախարարներ, և սկզբում, ճիշտ է, 12% կանանց ներկայացվածություն ունեինք խորհրդարանում, սակայն իրականում այսօր 10,8% է: Դա է պատճառը, որ նոր առաջարկով ենք հանդես գալու, որ այսուհետ ցուցակում ընդգրկված կնոջը փոխարինի ըստ ցուցակի հաջորդ կինը: Մենք բավական ծանրակշիռ փաստարկներ ունենք, որոնք այս առումով կարող ենք ներկայացնել իշխանություններին:

Խոսելով գենդերային հարցերին վերաբերող արդեն իսկ ընդունված օրենքների մասին՝ Ելենան նշում է, որ այսօր այդ օրենքների իրագործման մեխանիզմների հետ կապված լուրջ բացթողումներ կան:

- Ունենք կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, թրաֆիքինգի, ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին օրենքներ, բայց եթե վերջին երկուսի դեպքում մեխանիզմն աշխատում է, ապա հավասար իրավունքների դեպքում չկան կատարողական ինստիտուտներ, և բացի այդ, նախատեսված չէ կոնկրետ բյուջե: Այսինքն՝ օրենքը մնում է թղթի վրա:

Ինչ վերաբերում է կանանց ակտիվությանը խոչընդոտող կարծրատիպերին, ապա Ելենա Ռուսեցկայան համոզված է, որ այստեղ մեծ անելիք ունեն նախ և առաջ ԶԼՄ-ները:

- Նրանք են կարծրատիպեր կոտրելու ամենահզոր մեխանիզմը, սակայն հակառակն ենք տեսնում. ունենք սեքսիստական բնույթի շատ գովազդներ: Կատարել ենք նաև մամուլի գենդերային վերլուծություն, որտեղ իշխում են այն կարծրացած կարծիքները, թե կինը պետք է նստի խոհանոցում, նա ներկայացվում է որպես իր, որպես բուտաֆորիա՝ ի լրումն ինչ-որ ապրանքների, անգամ մարտի 8-ին, երբ կանանց իրավունքների մասին ռեպորտաժ էր պատրաստվում, անընդհատ լսում էիր՝ թույլ սեռ, թույլ սեռ բառերը, ինչն էլ ավելի է արմատավորում կարծրատիպերը…

Այստեղ, իհարկե, խնդիրը ոչ միայն լրագրողներինն է՝ պետք է հստակ աշխատանք կատարել խմբագիրների և պրոդյուսերների հետ: Հենց նրանք են լրագրողական ոլորտում քաղաքականություն ստեղծում: Իսկ լրագրողների հետ գենդերային կուրս պետք է անցնել հենց համալսարանական տարիներին:

Մասնակցիր, որ փոխես

«Որ տնտեսական հաջողությունը բերի նաեւ քաղաքական ակտիվության...»

- Իմ կարծիքով՝ նաև մեր ամենօրյա աշխատանքը գյուղական համայնքներում ցույց է տալիս, որ կանայք լավ լիդերներ են, կազմակերպելու և կառավարելու մեծ ջիղ ունեն, և նրանց պարզապես պակասում են իրազեկվածությունը, տնտեսական անկախությունը,- ասում է «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ գործադիր տնօրեն, փաստաբան Քրիստինա Գևորգյանը:

Մեր կազմակերպության ծրագրերը՝ «Օքսֆամ»-ի հետ համատեղ, ուղղված են կանանց ակտիվացմանը. որ գյուղաբնակ կնոջ ձայնը նույնպես լսելի լինի, որ տնտեսական ակտիվությունը բերի նաև քաղաքական ակտիվության, և, վերջապես, որ օրերից մի օր ունենանք նաև կին քաղաքապետներ: Կարծում եմ՝ գյուղաբնակ կանայք պետք է ԱԺ-ում էլ ընտրվեն որպես պատգամավոր՝ համայնքային խնդիրները խորհրդարանի ամբիոնից ներկայացնելու համար,- ասում է Քրիստինան:

Նրա խոսքով՝ իրենց կազմակերպության՝ «Օքսֆամ»-ի հետ համատեղ իրականացվող «Համայնքի ձայնը որոշումների կայացման գործընթացում. կարողությունների և հանձնառությունների հզորացում» ծրագիրն ընդգրկում է Վայոց ձորի և Սյունիքի մարզերի 16 շահառու համայնքներ: Աշխատանքի մեջ ակտիվորեն ներգրավված են նաև Եղեգնաձորում, Վայքում, Սիսիանում, Կապանում և Մեղրիում ստեղծված քաղաքացիական կենտրոնները:

- Ծրագրի նպատակն է նպաստել գյուղական համայնքների զարգացմանը, այն նաև գենդերային բաղադրիչ ունի: Խրախուսում ենք, որ կանայք ակտիվ լինեն համայնքային կյանքում, ընդգրկվեն ավագանու կազմում… Օրինակ՝ Սիսիանի քաղաքացիական կենտրոնի շահառու Իշխանասար, Տորունիք, Քարահունջ համայնքներում 6 ամսով դասընթացներ ենք կազմակերպել: Գիտելիքներ ենք տվել ՏԻՄ մարմինների, ընտրությունների հետ կապված, ինչպես պետք է մոնիթորինգ անել, ինչպես պետք է մասնակցել ավագանու նիստերին, բյուջետային քննարկումներին և այլն: Այսօր մեր երկու շահառու համայնքների՝ Տորունիքի և Քարահունջի ղեկավարները կանայք են, ունենք նաև ավագանու անդամներ: Սրանք այն կանայք են, ովքեր մեր սեմինարներին են մասնակցել:

Դրա հետ մեկտեղ, ինչպես նշում է Քրիստինա Գևորգյանը, եղել են նաև որոշակի խոչընդոտներ:

- Ցավոք սրտի, դեռ կան դեպքեր, երբ կարծրատիպային մոտեցումներն են գերակշռում, և, օրինակ, ամուսինը կարող է պարզապես արգելել, որ իր կինը մասնակցի մեր սեմինարներին…

«Խոչընդոտների չեմ հանդիպել, գուցե եթե փորձեմ ավելի մեծ դուռ բացել, զգամ...»

- Եթե մենակատար, ուրեմն ես էի, եթե կար կազմակերպչական հարց, ուրեմն այնտեղ էի, սկսած ամենափոքր տարիքից, իսկ տանը միշտ խրախուսում էին, հատկապես հայրիկը,- ժպիտով է հիշում մանկության տարիները Գեղանուշ Գրիգորյանը, ով արդեն մոտ 10 տարի է, ինչ ղեկավարում է «Հույսի կամուրջ» ՀԿ Բերդի մասնաճյուղը:

Մինչ այդ լրիվ այլ ոլորտում աշխատող երիտասարդ կնոջ համար իրական անակնկալ էր այս աշխատանքը:

- Եթե ասեմ՝ վախի զգացում չեմ ունեցել, ապա կստեմ, բայց հաղթահարել եմ, հատկապես որ շատ եմ սիրում իմ գործը:

Գեղանուշի համար իր բոլոր հաջողությունների կարևոր գրավականը ընտանիքի աջակցությունն է:

- Ամեն հարցում զգացել եմ ընտանիքի սատարը և՛ եղբորս, և՛ մայրիկիս կողմից, ընտանիքս է եղել կազմակերպության առաջին կամավորներից մեկը:

«Հույսի կամուրջի» մուտքը շատ սպասված էր, մինչ այդ հաշմանդամության խնդիրներով զբաղվող կազմակերպություններ չկային Բերդում: Այսօր ՀԿ-ն ծառայություններ է մատուցում Բերդի 17 համայնքներում:

- Ունենք 400 շահառու և մեր կարևորագույն խնդիրն ենք համարում, ինչպես առածն է ասում՝ ոչ թե ձուկ տալ, այլ ձուկ որսալ սովորեցնել: Մեր կամավորներն էլ հիմնականում հենց այդ գաղափարը կրող մարդիկ են, թեպետ հաշմանդամություն ունեն կամ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ են: Այս տարիների ընթացքում կազմակերպությունը բազմաթիվ հաջողված պատմություններ ունի, որոնք կարող են վարակիչ օրինակ դառնալ նման խնդիրներ ունեցող շատ ու շատ երիտասարդների համար:

Գեղանուշը նշում է, որ իրենց ծրագրերի առաջին բարեկամը «Օքսֆամ» կազմակերպությունն է եղել, որի աջակցությամբ էլ ՀԿ-ն անցկացրեց «Դարձնենք կանանց ձայնը հասանելի որոշումների կայացման մակարդակում» ծրագիրը:

- Մարդ անընդհատ պետք է աշխատի իր վրա, հատկապես կինը, քանի որ նրա նկատմամբ պահանջները թերևս ավելի շատ են, ամեն քայլափոխի էլ զգացել եմ, ամեն պաշտոնական հանդիպման, հարցի քննարկման ժամանակ, իմ սեփական փորձով գիտեմ,- նշում է Գրիգորյանը և հավելում, որ սեռով պայմանավորված խոչընդոտների չի հանդիպել իր անձի նկատմամբ,- գուցե եթե փորձեմ ավելի մեծ դուռ բացել, զգամ…

Երիտասարդների ձայնը

«Ի՞նչն է կանխորոշում աղջիկների ապագան»

- Մայրիկս սեմինարավար է, և դեռ փոքր տարիքից ինձ համար շատ սովորական էր տեսնել աշխատող կնոջը, որ կինը նույնպես աշխատավայրում է, զբաղված է, ու ինձ համար միևնույն էր, թե տանն ով է գումար վաստակում՝ հայրս, թե մայրս,- խոստովանում է Աշոտ Խալաթյանը, ով Եղեգնաձորի քաղաքացիական կենտրոնի կամավորներից է:

Սակայն Աշոտը նաև նշում է, որ, ցավոք, ոչ բոլորն են իր պես մտածում, և կա գենդերային անհավասարություն գրեթե ամեն քայլափոխում:

- Անգամ ամենափոքր իրավիճակը, եթե տուն ուշ ես վերադառնում, հատկապես գյուղական համայնքներում, տղայի և աղջկա համար տարբեր կերպ է դիտվում, հենց հասարակությունն էլ պարտադրում է իր կարծիքը՝ կարծես նախապես կանխորոշելով աղջիկների ապագան: Եվ այն գիշերվա սովորած դասերը, գիտելիքները պարզապես հաճախ մնում ու կորչում են հենց տան չորս պատերի մեջ:

Աշոտը նշում է, որ Եղեգնաձորում ունեն կին ավագանի.

- Ես նորմալ եմ դիտում այն փաստը, որ կինը նաև քաղաքականությամբ է զբաղվում, սակայն շատ կարևոր է, որ կողքինդ, ում հետ ապրում, աշխատում ես, քո վերադասը, կապ չունի՝ կին, թե տղամարդ, գենդերապես զգայուն լինի ու խոչընդոտներ չստեղծի քեզ համար միայն նրա համար, որ կին ես…

«Կինը կփոխի այն համայնքը, որտեղ կընտրվի»

- Այսօր գյուղի խնդիրները բազմաթիվ են ու բազմազան, և դրանց լուծման համար նախ և առաջ պետք է բարձրացնել գյուղի կնոջը, հզորացնել և օգնել նրան,- համոզված է Մարիամ Մկրտչյանը, ով «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ անդամ է և Վայքի քաղաքացիական կենտրոնում իրավաբան:

- Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն համայնքները, որոնք արդեն գոնե մեկ կին ավագանու անդամ ունեն, ավելի արդյունավետ են աշխատում, այնտեղ սոցիալական խնդիրները ավելի շատ են լուծվում: Այդ պատճառով մենք փորձում ենք նոր ծրագրի միջոցով, որը սկսելու ենք ապրիլից, հասնել այն արդյունքին, որպեսզի մեր շահառու Մարտիրոս և Հերհեր համայնքների ավագանիներում նույնպես կանայք ընդգրկվեն: Եթե նրանք ընտրվեն, համոզված եմ՝ շատ խնդիրներ, հատկապես սոցիալական, կլուծվեն հենց նրանց ձայնի բարձրացման շնորհիվ: Ես կցանկանայի տեսնել մենք համայնքներում կանանց, որոնք կանգնած են տղամարդկանց կողքին հավասարը հավասարի հետ ու համատեղ լուծում են իրենց համայնքի խնդիրները:

Համարի վրա աշխատել են՝
Լիլիթ Քոչինյանը, Կարինե Պետրոսյանը,
Լիա Խոջոյանը, Արմինե Մարտիրոսյանը

OXFAM

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com